

**Մարիամ ԽԱԺԱԿՅԱՆ**  
Երևանի պետական համալսարան

**ԽՈՍՔԻ ՏԵՄՊԸ ԵՎ ԴՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ  
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

*Հոդվածը նպատակ ունի վեր հանել այնպիսի խնդիրներ, որոնց շարժումը հաճախ բխվում են դասավանդողներն ու սովորողները ուսումնառության գործընթացում: Խոսքի տեմպը, որն առոգանական միջոցների շարքում կարևոր տեղ է գրավում, պետք է առանձնահատուկ ուշադրության արժանանա: Այդ առումով անգնահատելի է դասախոսությունների դերը, որոնց միջոցով առավել հեշտանում է տեմպի ճիշտ կիրառման ուսուցումը:*

**Բանալի բառեր.** *խոսքի տեմպ, արագ/դանդաղ տեմպ, վերաբերմունքային առումով նշույթավորված/չտեղք տեմպ, առոգանական և արտալեզվական միջոցներ, ուղերձ, հասցեատեր*

Յուրաքանչյուր անհատի բնորոշ է խոսքի որոշակի տեմպ, որը, սակայն, կախված խոսակցության տեղից, ժամանակից, միջավայրից, խոսողի տրամադրությունից, նպատակներից և բազում այլ լեզվական ու արտալեզվական գործոններից, կարող է տատանվել: Տեմպի փոփոխությամբ հնարավոր է խոսքին հավելյալ իմաստային նրբերանգներ հաղորդել, տարանջատել գլխավոր միտքը երկրորդականից: Տեմպի դերը, որպես լեզվաբանական ուսումնասիրության առարկա, հատկապես կարևորվում է այն դեպքերում, երբ վերջինիս փոփոխությունից անմիջական ազդեցություն է կրում իմաստը: Սակայն, ուսումնառության գործընթացում հաճախ լինում են դեպքեր, երբ սովորողի խոսքի տեմպը, անկախ հաղորդվող նյութի կարևորության աստիճանից, կամ չափազանց արագ է, կամ էլ չափազանց դանդաղ: Երկու ծայրահեղություններն էլ խիստ դժվարացնում են հաղորդվող նյութի ընկալման գործընթացը՝ նյարդայնացնելով լսողներին և ի սկզբանե բացասական նախատրամադրվածություն ստեղծելով: Եթե խոսքի տեմպի ուսուցումը տարվի դասախոսությունների օրինակով, ապա հնարավոր կլինի աննախադեպ հաջողություններ գրանցել սովորողների շրջանում: Խոսքը (մեր պարագայում դասախոսի խոսքը) գեղեցիկ, տպավորիչ կինչի, եթե հաշվառվեն առոգանական բոլոր միջոցները ճիշտ հարաբերակցությամբ: Խոսքի արտահայտչականությունն ընդգծելու հարցում մեծ դեր ունի դադարը: Իմաստային առումով ևս խիստ կարևորվում է վերջինիս դերը: Դադարը կամա թե ակամա ազդում է խոսքի տեմպի վրա: Ունկնդրին դադարն անհրաժեշտ է տեղեկատվությունը ճիշտ ընկալելու և

գնահատելու, իսկ խոսողին՝ մտքերն ի մի բերելու, ինչպես նաև ունկնդրի արծագանքը ճիշտ գնահատելու համար:

Ճիշտ օգտագործման դեպքում դադարը ոչ միայն ցանկալի է և օգտակար շատ առումներով, այլև՝ հեշտ կիրառելի: Սակայն, որքան էլ զարմանալի է, ոչ շատ հռետորներ են դրանից խելամիտ կերպով օգտվում, հատկապես սկսնակ դասախոսները շատ են խուսափում դադարներից: Մինչդեռ այն հեշտացնում է շնչառությունը, քանի որ ավելորդ անգամ օդ արտաշնչելու և օդի նոր պաշար ներշնչելու համար ժամանակ է անհրաժեշտ: Դադարը հնարավորություն է տալիս մտքերը ճիշտ ձևակերպել և տրամաբանորեն կապակցել իրար: Ինչպես Կիպլինգն է նշում, դադարներով կարելի է խոսել /[http://www.edgarcaysi.narod.ru/karnegi\\_kv6\\_6.html](http://www.edgarcaysi.narod.ru/karnegi_kv6_6.html)/: Ճիշտ և տեղին արված դադարները դասախոսի վարպետության մասին են վկայում: Եվ դրանք մեծ արժեք են ձեռք բերում, եթե խելամիտ կերպով են օգտագործվում: Դադարի միջոցով ներմուծվում են կարևոր մտքեր: Իսկ երբ դադարը հաջորդում է կարևոր մտքին, ապա տվյալ միտքը հասցեատիրոջ գիտակցության մեջ առավել խոր հետք կարող է թողնել: Կարճ դադարը կուլմինացիայից առաջ և հետո ուղեբժն առավել հստակ կերպով ընդգծելու միջոցներից է:

Խոսքի տեմպի և տևողության լեզվաբանական բեռնվածությունը կախված է խոսողի համար տվյալ տեքստահատվածի կարևորության աստիճանից: Ինչպես հայտնի է, դասախոսության մեջ տեմպի արագությունը կապված է միջանկյալության երևույթի կամ լսողներին հայտնի տեղեկատվություն փոխանցելու հետ, կամ էլ իրենից ներկայացնում է փաստ կամ երևույթ, որի կարևորությունը երկրորդական է: Որոշակի կապ գոյություն ունի նաև խոսքի տեմպի և նախադասության հաղորդակցական տիպերի միջև: Այսպես՝ հարցական նախադասությունների արտաբերման մեջ խոսքի տեմպը հարաբերականորեն արագ է, իսկ բացականչական-գնահատողական նախադասություններ արտասանելիս՝ հարաբերականորեն դանդաղ, ինչը և կապված է խոսքի հնչերանգային մասնատվածության տարբեր աստիճանների հետ /Светозарова 1982: 48/:

Դասախոսության տեմպի առանձնահատկությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դասախոսի խոսքի տեմպը պետք է մշտապես փոփոխվի: Միապաղաղ տեմպը կարող է բացասաբար անդրադառնալ լսարանի ուշադրության վրա, որը բոլորովին ցանկալի չէ:

Մուտքի համեմատ, անհրաժեշտ է դասախոսության տեմպը փոքր-ինչ դանդաղեցնել, իսկ եզրափակիչ մասում առավել դանդաղ և առավել ընդգծված ձևով ներկայացնել դասախոսության հիմնական դրույթները:

Դիտարկենք Չիկագոյի համալսարանի իրավաբանության և տնտեսագիտության պրոֆեսոր Սոլ Լեվմորի դասախոսությունից մի հատված՝

∇*Prices* *ʔ* *have* *'puzzled e'conomists for* *hundreds,* *ʔ* *if not* *'thousands of years.* // slow tempo

*You know, why do things 'cost what they do? // You know, say I eat a 'chocolate 'chip 'cookie. | ' Why does that cookie cost a 'dollar? Why does it cost that amount?*

∇*Well, | first let's see the 'puzzle ʔ associated with it. | You might be inclined to say, well, a really good cookie 'costs 'more. ʔ People 'really 'like it. | ∇Well, you might say, | the more important the thing is, | the 'more it 'costs. If I ,say, a \ house costs \$300,000 and a cookie costs \$1.00, ʔ why does the house cost more than the 'cookie?*

*Your i'nitial res'ponse might be, ʔ well, people need 'houses more. The cookie's a 'luxury. Therefore, the house costs 'more. | But that's 'not really a successful way to think about it./*

*'Think of the 'following 'classic example, | \air. || 'Air is 'basically free. ||*

*The 'air is free. || And then things like a diamond are 'classically 'super expensive. |*

slow tempo

*E'conomists used to say, " 'Why is a diamond more expensive than a 'breath of 'air?" // Well, you already 'know the answer. **The 'answer, you should say, , is | 'scarcity. |***

slow tempo

*There are 'very, 'very 'few 'diamonds. ʔ You have to dig 'deep in the ground to get the diamond. Trans'port it thousands of miles, 'polish it, 'cut it, do \ this, do 'that. It's a lot of 'work, it's very hard to 'get them, there aren't 'many of them. | 'Air, | it's available. // You just 'breathe it in. |*

(The Floating University 2014, < <http://www.floatinguniversity.com/lectures-levmore>>)

Հարկ է սկսել այն բանից, որ Սոլ Լեվմորի խոսքի տեմպն արագ է, շատ արագ, ծայրահեղ արագ: Այնուհանդերձ, նշված տեքստահատվածում կան նախադասություններ (թավ տառերով առանձնացված նախադասությունները), որոնք արտասանվում են դանդաղ տեմպով՝ նորմի սահմաններում: Այսպես, օրինակ՝ ∇*Prices* *ʔ* *have* *'puzzled e'conomists for* *hundreds,* *ʔ* *if not* *'thousands of years* // նախադասությունը բանախոսը սկսում է դանդաղ տեմպով և ավարտում, ինչպես ընդունված է, երկու միավորից կազմված դադարով: Հստակ երևում է, որ դասախոսությունն ունի տնտեսագիտական ուղղվածություն, իսկ դասախոսության առարկան գնային քաղաքականությունն է: Նախադասությունը բաժանված է երեք իմաստային խմբերի՝ հստակ շեշտադրումներով: Եվ այն խնդիրը, որն արդեն հարյուրավոր, եթե ոչ հազարավոր տարիներ հետաքրքրում է տնտեսագետներին, արդեն իսկ գրավում է ունկնդրին: Լսարանին ուղղվում են հոռետորական հարցեր, որոնց հաջորդում են բանախոսի պատասխանները: Խոսքի տեմպն աստիճանաբար արագանում է: Չեն

պահպանվում իմաստային խմբերի, ինչպես նաև նախադասությունների միջև դադարները, շեշտվում են իմաստային առումով միայն ամենակարևոր բառերը: Նշված բոլոր այս իրողությունները նպաստում են չափազանց արագ տեմպին: Ընդունված փաստ է, որ նվազագույն քանակով շեշտված բառերի առկայության դեպքում ավելի արագանում է խոսքի տեմպը: Երբեմն նույնիսկ չի զգացվում, թե որտեղ է ավարտվում մի նախադասությունը և որտեղ է սկսվում մյուսը՝ դրանով իսկ ընդգծելով բոլոր այն տնտեսագիտական խորամանկ քայլերը, որոնք չի հասցնում նկատել հասարակ քաղաքացին, այսինքն՝ նա մտածելու ժամանակ չի ունենում: Այնուհետև կրկին տեմպը դանդաղում է, քանի որ բանախոսը ներմուծում է մեկ այլ, չափազանց կարևոր միտք հետևյալ նախադասությունների միջոցով՝ *'Think of the following classic example, / \air. || 'Air is basically free. || The air is free.* Բերելով օդի, ըստ էության, անվճար լինելու դասական օրինակը, բանախոսը արտասանում է *air* բառը լայն վարընթաց տոնով՝ վերջինիս հաղորդելով հուզական առնշանակություն: Երեք նախադասություններում էլ կրկնվում է *air* բառը՝ առանձնահատուկ կերպով ընդգծելով օդի անվճար լինելու փաստը: Կրկնության միջոցով վերջինս ձեռք է բերում հուզական բեռնվածություն: Երեք նախադասություններին էլ հաջորդում է երկու միավորից կազմված դադար: Խոսքի տեմպը դանդաղ է: Սրան հաջորդող *And then things like a diamond are 'classically super expensive* նախադասությունից սկսած տեմպը կրկին ծայրաստիճան արագանում է և այնպիսի տպավորություն է ստեղծվում ասես *and then things* արտահայտությունը հնչում է *a man thinks*: Իսկ նման պատրանքներ շատ հաճախ են առաջանում չափազանց արագ խոսք լսելիս: Երբեմն պարզապես փորձում ենք կռահել բառերը, հուսալով, որ ճիշտ ենք հասկացել: Ի՞նչ բացատրություն է տալիս բանախոսն այն փաստին, որ ադամանդը գերթանկ է: Անմիջապես հետևում է *The answer, you should say, is / scarcity* / պատասխանը: Թանկությունն, ըստ Սոլ Լեվմորի, արդարացվում է հազվագյուտ լինելու փաստով: Նախադասության երկու իմաստային խմբերն իրարից բաժանվում են մեկ միավորից կազմված՝ իմաստային խմբերին հատուկ դադարով, իսկ *scarcity* բառն ինքնին ներկայացնում է առանձին իմաստային խումբ, արտասանվում է վարընթաց, վստահ տոնով՝ դրանով իսկ ընդգծելով արտահայտած մտքի իրական, ճշմարիտ լինելու փաստը, ինչպես նաև վստահություն առաջացնելով ունկնդրի մեջ: Կրկին հաջորդում է արագ խոսքը: Իրար հաջորդող նախադասությունների միջև կամ չկան դադարներ, կամ էլ եթե կան, ապա շատ կարճ են, գրեթե անընկալելի: Օրինակ *Well, | first let's see the puzzle... -ից սկսած մինչև But that's 'not really a successful way to think about it* / հատվածը պարունակում է 91 բառ՝ 126 վանկ, որը բանախոսը ներկայացնում է 28 վայրկյանում:

Վերը բերված օրինակը ցույց է տալիս, որ դասախոսներն արագ տեմպն օգտագործում են կամ միջանկյալ նախադասություններ

ձևավորելու, կամ խոսքահատվածի այն մասերի ձևավորման համար, որտեղ խոսքը երկրորդական փաստերի ու երևույթների մասին է: Հաճախ արագ տեմպը խոսողի կողմից օգտագործվում է դասախոսության առանձին մասեր ձևավորելու համար, որոնք էական նշանակություն չունեն նյութի բացատրության համար: Արագ տեմպը ենթադրում է նաև բառային միավորների տնտեսում, երբ ավելի մեծ հնարավորություն է ընձեռվում հասցեագրողին սահմանափակ քանակով բառերի օգտագործմամբ առավել լիարժեք տեղեկատվություն հաղորդել հասցեատիրոջը՝ տեղեկատվությունը չձանրաբեռնելով իմաստային առումով կարևորություն չունեցող բառերով, այսինքն՝ որքան այդ միավորները շատ լինեն, այնքան անհրաժեշտ տեղեկատվությունը կտարրալուծվի: Եթե միտքը ձևակերպող բառերի խումբը դրսևորվում է ծայրահեղ ճշգրտությամբ, ապա բառային կամ հնչույթային միավորներն անպայման պետք է պարունակեն ողջ տեղեկատվությունը, այսինքն՝ տվյալ բառախումբը կամ հնչույթախումբը պետք է արտահայտի լիարժեք տեղեկատվություն, որ լեզվի կրողը երբևէ ընկալել է կամ արտահայտել, կամ նույնիսկ անցկացրել է իր մտքով, և հնարավոր է, որ, իբրև պաշար, մտապահել է լեզվաբանորեն ոչ կարևոր տեղեկատվություն այն համատեքստում, որտեղ տեղի է ունեցել դրանց իրացումը, ինչպես օրինակ՝ եղանակը, խոսողի սանրվածքի ոճը, տվյալ իրադրության մեջ պատահաբար հայտնված անցողի կոշիկները և այլն:

Ինչ վերաբերում է դանդաղ տեմպին, ապա դրա կիրառությունը դասախոսության ոճում ունի ճարտասանական ուղղվածություն: Խոսողի դանդաղ տեմպը ցույց է տալիս, որ նա հատուկ նշանակություն է տալիս բառին, բառախմբին, դասախոսության հատվածին և ձգտում է լսարանի ուշադրությունը հրավիրել դրանց վրա: Այս հարցը լիարժեքորեն կարելի է պատկերացնել՝ հաշվի առնելով արտալեզվական հիմքը:

Խոսքի արագությանն անդրադարձել են նաև հոգեբանության տեսանկյունից: Հետաքրքրական է Միլլերի և այլոց հետազոտությունը, որտեղ հեղինակները քննարկում են խոսքի արագության և խոսողի վերաբերմունքի փոփոխության հարաբերակցությունը ուսումնասիրված մի քանի բնագավառներում: Ըստ նրանց՝ խոսքի արագությունը պայմանավորված է խոսողի ինքնավստահությամբ և ուղերձի բարդությամբ ու հավաստիության աստիճանով: Խոսքի տեմպը հանդես է գալիս որպես փաստարկների նկատմամբ վստահության բանալի: Ընդգծված առոգանությունը համոզման/ներգործման գործընթացի պարտադիր բաղադրիչ է: Ինչպես հայտնի է, համոզման գործընթացի ամբողջական ընկալումը փոխկապակցված է հաղորդման-ներագրման / ներգործման գործառույթների իրացման հետ: Ներագրման գործընթացը չի կարող տեղի ունենալ, եթե համոզման գործընթացը իր նպատակին չի հասել, այսինքն՝ հասցեատերը կարող է ուղերձը ընկալել իր ամբողջականության մեջ միայն այն դեպքում, եթե նա համոզված է, որ փոխանցվող

տեղեկատվությունը հավաստի է: Ներգործման գործընթացը չի կայանա, եթե հասցեագրողին չհաջողվի համոզել հասցեատիրոջը իր ասելիքի ճշմարտացիության մեջ: Համոզման գործընթացի համար էական բնութագրիչ կարելի է համարել այն, թե որքանով է ընդգծվում ընկալման և գնահատողական գործոնների կարևորությունը: Այս տեսության կողմնակիցները ելնում են նրանից, որ մարդը հստակ կերպով արձագանքում է որոշակի ազդեցությունների /Miller et al. 1976: 615-624/:

Արագ տեմպը կարող է մտազուգորդվել ինչպես հայտնի տեղեկատվության, այնպես էլ հրատապության՝ այսինքն ինչ-որ կարևոր տեղեկատվության հետ, երբ խոսողը հևալով, շնչահեղձ լինելով է խոսում /Brown 1984: 137-139/: Այն կարող է կապվել նաև ժամանակի սղության հետ, երբ խոսողը շտապում է, կամ էլ նման տպավորություն է ստեղծում՝ փորձելով նվազագույն ժամանակահատվածում հնարավորինս շատ տեղեկատվություն փոխանցել:

Խոսքի տեմպը կարող է արագանալ նաև այնպիսի իրավիճակներում, որոնք բոլորովին կապ չունեն ժամանակի սղության հետ: Երբ ստիպված ենք լինում տհաճ լուր հայտնել ինչ-որ մեկին, խոսքի տեմպն ակամայից, ենթագիտակցաբար արագանում է, որովհետև փորձում ենք որքան հնարավոր է արագ ազատվել մեզ ճնշող ծանր բեռից: Դիտարկենք Վ. Սարոյանի «Մարդկային կատակերգություն» վեպից մի հատված՝

*“Mrs. Sandoval, Homer said swiftly, your son is dead. Maybe it's a mistake. Maybe it wasn't your son. Maybe it was somebody else. The telegram says it was Juan Domingo. But maybe the telegram is wrong.”* (W. Saroyan, “The Human Comedy”)

Նշված հատվածում նամակաբեր Հոմերի համար չափազանց ծանր իրավիճակ է ստեղծվել, քանի որ նա ստիպված է տիկին Սանդովային հայտնել ռազմաճակատում զոհված որդու մահվան լուրը: Բացի այն, որ խոսքի տեմպը չափազանց արագ է, նա կարծես փորձում է արդարանալ, որ ստիպված է նման լուր հայտնել և ջանում է ամեն կերպ համոզել որդեկորույս մորը, որ ամենայն հավանականությամբ սխալմունք է եղել և դա չի կարող իր որդին լինել: Այդ օրը տասնչորսամյա պատանին միանգամից հասունանում է:

Ամփոփելով նշենք, որ ինչպես արագ, այնպես էլ դանդաղ տեմպը վերաբերմունքային առումով նշույթավորված են: Սակայն դրանց կարևորության մասին խոսք լինել չի կարող, երբ մարդուն բնորոշ խոսքի տեմպը բնականից կա՛մ շատ արագ է, կա՛մ էլ շատ դանդաղ: Իսկ ինչ վերաբերում է խոսքի սովորական /չեզոք տեմպին, ապա այն զուրկ է ամեն տեսակի հուզարտահայտչական նրբերանգներից, այլ կերպ ասած՝ վերաբերմունքային առումով չեզոք է:

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ջարմանալի չէ, որ տեմպը, որով կարող է վերծանվել որոշակի ուղերձ, կարևոր գործոն է մարդկային հաղորդակցման մեջ, որի հիմքում ընկած է տեղեկատվության փոխանցումը: Հետևաբար, բնական է ակնկալել, որ առկա են արագ և դանդաղ ուղերձներ: Արագ ուղերձը ակնհայտորեն չի կարող լիարժեք ընկալվել դանդաղ տեմպին սովոր մարդկանց կողմից: Սա, իհարկե, կարող է միտումնավոր արվել: Խնդիրն այն է, որ քչերն են տեղյակ, որ տեղեկատվությունը կարող է հաղորդվել տարբեր արագություններով՝ կախված հաղորդակցական պայմաններից ու նպատակից և հասցեագրողի անհատական միտումներից: Մեր օրինակում հակադրվում են արագ տեմպը և դանդաղ տեմպը ([http://www.internationalforum.com/Articles/hidden\\_differences %20by% 20Hall.ht](http://www.internationalforum.com/Articles/hidden_differences%20by%20Hall.ht)):
2. Մարտին Կրեմերն իր “Underlying Representations” գրքում նշում է բառային տնտեսման չորս հնարավորություն (dimension)՝
  - ա) առանձին բառային միավորների տնտեսում,
  - բ) հնչույթային պաշարի տնտեսում,
  - գ) հնչյունական կուտակումների (համադրումներ) տնտեսում,
  - դ) հարացույցային շարքերի տնտեսում /Krämer, 2012/:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Brown G. Listening to Spoken English. M., 1984.
2. Miller N., Maruyama G., Beaber R. J., Valone K. Speed of speech and persuasion // *Journal of Personality and Social Psychology*, vol. 34(4), Oct. 1976.
3. Krämer M. Underlying Representations. Cambridge: Cambridge University Press, 2012.
4. Hall E. T., Hall M. R. Hidden Differences: Doing Business with the Japanese // URL: [http://www.internationalforum.com/Articles/hidden\\_differences%20by%20Hall.ht](http://www.internationalforum.com/Articles/hidden_differences%20by%20Hall.ht)
5. Levmore S. Monopolies as an Introduction to Economics // URL: <https://www.youtube.com/watch?v=FK2qHyF-8u8>
6. Карнеги Д. Как вырабатывать уверенность в себе и влиять на людей, выступая публично // Электр. ресурс: [http://www.edgarcaysi.narod.ru/karnegi\\_kv6.html](http://www.edgarcaysi.narod.ru/karnegi_kv6.html)
7. Светозарова Н. Д. Интонационная система русского языка. Ленинград: Изд. Ленинградского ун-та., 1982.

**Մ. ХАЖАКЯН – Темп речи и методика его преподавания в процессе обучения.** – Темп речи занимает важное место среди других просодических средств и играет определенную роль в процессе декодирования, для того чтобы информация полностью и без искажения дошла до адресата. В статье особое внимание уделяется анализу речи преподавателя во время лекции: автор пытается показать, насколько важен темп речи для восприятия информации.

**Ключевые слова:** темп речи, быстрый/медленный темп, выразительный (маркированный)/нейтральный темп, просодические и экстралингвистические средства, сообщение, адресат

**Մ. KHAZHAKYAN – The Tempo of Speech and the Methods of Teaching It.** – Depending upon numerous situations people vary the tempo of their speech. If we want the information to fully and completely, without being distorted, reach the addressee, special attention should be paid to the correct application of it. In this respect, great importance is attached to lectures which directly deal with spoken communication. Through lectures, it becomes possible to show how vital the role of the speech tempo is in transferring and perceiving the information.

**Key words:** tempo of speech, fast/slow tempo, attitudinally marked/neutral tempo, prosodic and extralinguistic means, message, addressee